# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Արգավանդ Կահույք ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-23/62 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 11 | Զգեստապահարանը ամբողջությամբ (բացառությամբ հետնապատից) պատրաստված կլինի լամինացված 18մմ հաստությամբ ՓՏU-ից, արտաքին չափսերը՝ 820x450x2000մմ (LxԽxԲ): Զգեստապահարանը վերևից ունի 400մմ բարձրությամբ 1 դարակաշար, որից 60մմ հեռավորությամբ տակից ամարցվում է ¾ դյույմ քրոմապատ, մետաղական երկաթյա ձող՝ համապատասխան ամրացումներով: Զգեստապահարանն ունի 2 իրար հավասար դուռ, դռները՝ լամինացված 18 մմ հաստությամբ ՓՏU-ից: Դռներն ամրացվում են 3-ական ծխնիներով: Դռները կունենան մետաղական բռնակներ: Աշխատանքային հարթության եզրերը կշրջափակվեն 1մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC), իսկ ոչ աշխատանքային հարթության եզրագծերը՝ 0.4մմ հաստության պլաստիկ եզրաժապավենով (PVC): Աշխատանքային հարթությունը կլինի անփայլ: Բոլոր միացումներն կիրականացվեն թաքնված ամրակցումներով: Հետնապատը կլինի 4 մմ հաստությամբ լամինացված փայտաթելային սալից(ԴՎՊ) և նույն ՓՏU-ի գույնի: Պահարանը ամբողջ պարագծով կունենա շրջանակաձև ոտքեր, որի հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին, տակից կամրացվի պլաստիկե մուգ գույնի տակդիրներ՝ 8մմ հաստությամբ: Ոտքեր հանդիսացող, տակը դրված ուղղանկյուն հենակի արտաքին չափսերն են՝ 800x420x100մմ (LxԽxԲ), որի հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին, տակից կամրացվի պլաստիկե մուգ գույնի տակդիրներ, որոնց տակի պատերի հաստությունը՝ 8մմ է: Ապրանքները կլինեն նոր՝ չօգտագործված: Երաշխիքային ժամկետը՝ 365 օր: Երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները կշտկվեն տեղում /դետալների փոխարինում/ կամ կփոխարինվեն նորով: Չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը ±5%: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

АРГАВАНД МЕБЕЛЬ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-23/62 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 11 | |